

**ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՍՏՂԱՏՈՄԱՐԱԿԱՆ
ՏԵՐՄԻՆԱԼԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Վ. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հումանշտությունն աշխարհի բոլոր լեզուներին բնորոշ լեզվական միջոց է, որը լեզուն դարձնում է առավել ճկուն և հարուստ իմաստային, գործառական ու ոճական նրբերանգներով: Սակայն հումանշտությունը, որը բարձր է գնահատվում լեզվի ընդհանուր բառապաշարի սահմաններում, տերմինաբանական համակարգերում համարվում է բացասական ու մերժելի երևույթ: Սա մեկ անգամ ևս հաստատում է այն տեսակետը, որ, թեև տերմինաբանությունը լեզվի ընդհանուր բառապաշարի մի ենթահամակարգն է, սակայն նրան բնորոշ առանձնահատկությունները հիմք են տալիս գիտաբանների համակարգիչ քննել որպես անկախ և ուրույն համակարգ: Լեզվական այն երևույթները, որոնք ընդունելի են լեզվի ընդհանուր համակարգի տեսակետից, կարող են մերժելի լինել գիտության լեզվում: Դրանցից է և հումանշտությունը:

Ընդհանուր բառապաշարի համակարգում հումանշտությունը քննության է ենթարկվում իր երկու եզրերով՝ հումանշտության և նույնանշտության: Մինչդեռ տերմինաբանական համակարգերում այս տեսակետից առավել նպատակահարմար է նույնանիշների քննությունը, այսինքն՝ այն տերմինների, որոնք գործածվում են միևնույն հասկացության բնորոշման համար: Ինչպես հայտնի է, տերմինի բնորոշ հատկանիշներից է նրբերանգների բացակայությունը: Իսկ համանիշները ոչ այլ ինչ են, եթե ոչ միևնույն հասկացության նրբերանգների բնորոշումներ: Ուստի միանգամայն իրավացի է Լ. Ղազանչյանը՝ նշելով, որ «...ճիշտ կլինի լեզվական հիշյալ երևույթի բնորոշման համար գործածել տերմինների նույնանշտություն (կրկնակություն կամ զուգաձևություն), իսկ միավորների համար՝ նույնանիշ (կրկնակ կամ զուգաձև) տերմիններ անվանումները» (ընդգծումը մերն է—Վ. Ա.)¹:

Ժիշտ է, ներկայումս տերմինային հոմանշտություն հասկացության հարցը հայ լեզվաբանական աշխատություններում փոքրիշատե պարզաբանված է, սակայն այդ երևույթի անվանման կամ բնորոշման հարցում դեռևս միասնություն չկա. զուգաձևությունները երբեմն քննում են որպես տերմինային հոմանշտություն², երբեմն՝ որպես տերմինային նույնանշտություն³, երբեմն էլ՝ որպես տերմինային զուգաձևություն⁴: Դրանց մեջ ներառելով և՛ նույնանիշները, և՛ համանիշները: Այսպիսի տարակարծությունների պատճառն, ըստ երևույթի, պետք է բացատրել նրանով, որ մասնագետները գործնականում հաճախ դժվարանում են որոշակիորեն սահմանազատել համանիշներն ու նույնանիշները, հատկապես, երբ խոսքը վերաբերում է գիտության կազմավորման շրջանին, երբ դեռևս զգացվում է հասկացությունների անբավարար ամրակայվածություն որոշակի տերմիններով: Սա էլ իր հերթին հիմք է տալիս մասնագետներին հանգելու այն կարծիքին, որ տարբերակայնությունն առա-

¹ Լ. Ղազանչյան, Հայերեն լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծություն (Լեզվի և ոճի հարցեր, պր. 4, Երևան, 1977, էջ 227):

² Ի. Շալուեց, Տերմինային հումանշտություն և բազմիմաստություն (Լեզվի և ոճի հարցեր, պր. 8, Երևան, 1984, էջ 129):

³ Լ. Ղազանչյան, նշվ. աշխ., էջ 39:

⁴ Լ. Պետրոսյան, Հայերեն գրականագիտական տերմինաբանություն (Լեզվի և ոճի հարցեր, պր. 8, Երևան, 1984, էջ 87):

վել բնութագրական է տերմինահամակարգերի կաղամվորման շրջանին, երբ տերմինակաղամությունն իրագործվում է դեռևս տարերայնորեն, իսկ գիտաբանների նկատմամբ, այսպես ասած, գիտակցական մոտեցումը սկսվում է գիտության դարգացման որոշակի փուլից հետո միայն⁵։

Հուգահեռ գործածությունն ունեցող տերմինների միօրինակացման հարցը տերմինաբաններին հուզող կարևոր ու շուտափույթ լուծում պահանջող խնդիրներից է, քանի որ տերմինաբանության մշակումն ու կարգավորումը առաջին հերթին սկսվում են մեկ հասկացությանը՝ մեկ անվանում սկզբունքի իրագործումից։ Այդ խնդրի լուծումը կարևոր է երկու տեսակետից. նախ, համապատասխանություն կստեղծվի գիտության ու նրա լեզվի միջև, երկրորդ, այդ համապատասխանությունը խթան կդառնա գիտության հետագա բուռն զարգացման համար։

Տարբերակայնության համընդհանուր, միանշանակ դասակարգում առայժմ չկա։ Սովետական լեզվաբանների՝ բառային զուգաձևություններին նվիրված աշխատություններից երևում է, որ այդ հեղինակներից յուրաքանչյուրը տարբերակները խմբավորում է և դասակարգում յուրովի, տարբեր տեսանկյուններից։ Կարծում ենք, որ այդ ոչ միատեսակ դասակարգման պատճառը պետք է փնտրել ուսումնասիրման ենթարկվող նյութի առանձնահատկությունների մեջ։ Լեզվաբանական աշխատություններում դիտվում է տարբերակայնության երկու ըմբռնում. մի կողմից քննվում են միայն կառուցվածքային տարբերակները (ենդ ըմբռնում), մյուս կողմից՝ նաև ժամանակային ու գնահատու, տարբերակները (լայն ըմբռնում)⁶։ Այստեղ կխոսենք միայն կառուցվածքային տարբերակայնության մասին։ Բառը, որպես երկկողմ լեզվական միավոր, կարող է տարբերակներ ունենալ և՛ սրտաքին՝ հնչյունական, և՛ ներքին՝ իմաստային կտրվածքում։ Փորձենք սալ մեր ըմբռնումը՝ հենվելով հին շրջանի աստղագիտական-տոմարական հարուստ բառամթերքի վրա։

Տերմինային տարբերակները, այսինքն՝ նույն իմաստն արտահայտող դիտաբառերը, կարելի է բաժանել երեք հիմնական խմբի՝

1. հնչյունական,
2. ձևաբանական,
3. բառային։

1) Հնչյունական տարբերակներ են այն տերմինները, որոնք նույն իմաստն արտահայտում են հնչյունական կազմի նվազագույն փոփոխությամբ։ Սրանք կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

ա) Բուն հնչյունական տարբերակներ. որոնցում որևէ հնչյուն ավելանում է կամ փոխվում, ինչպես՝

Արուսեակ||Արսսեակ

Կիրակէ||Կիրակէ

Երկակտոր||Երկակտոր (Լուսնի փուլերից. Երկակտոր է կոչվում, որովհետև Լուսինն իր ամբողջական լույսի կես մասով է երևում)։

Տոմար||Տովմար

Պենտեկոստէ||Պենտակոստէ

Կանոն||Քանոն||Քանուն և այլն։

բ) Ուղղագրական տարբերակներ, որոնցում այս կամ այն հնչյունը փոփոխվում է ուղղագրական որևէ կանոնի համաձայն, ինչպես՝

Առեւթ||Առիւծ

Վտաւան||Վտավան

⁵ Л. Кутина, Формирование языка русской науки, М.—Л., 1964, с. 194.

⁶ О. О. Ахманова, Ю. А. Бельчиков, В. В. Веселптский, К вопросу о правильности речи (Вопросы языкознания, 1960, № 2, с. 37).

⁷ Տե՛ս Ա. Շիրակյոյի, Մատենագրություն, Երևան, 1979, էջ 143։

Աւր||Օր
 Փառազնօտ||Փառազնոտ
 Արեւագալ||Արեւագալ
 Քաւդեայ||Քօդեայ
 Իրիս||Իռիս||Իրիտէ
 Քասիոփէ||Կասսիոպէ

Ելիք||էլիքս
 Տօմար||Տոմար
 Կղիմայ||Կլէմ||Կլիմ||Կլիմա և այլն:

գ) Հռդակապով և անճռդակապ տարբերակներ, ինչպես՝

Յարդագող||Յարդգող
 Արեւամայր||Արեւմայր
 Ականաքթիթ||Ականքթիթ
 Կիրակամուտ||Կիրակմուտ

Ճրագալոյց||Ճրագլոյց

Կարակին||Կարկին և այլն:

դ) Հնչյունափոխված և անճնչյունափոխ տարբերակներ, ինչպես

Արտախոյր||Արտախուր
 Իրշալոյս||Արշալուս և այլն:

2) Ձևաբանական տարբերակներ են այն տերմինները, որոնք արտահայտում են նույն իմաստը՝ արտահայտութիւնն պլանում կրելով ձևաբանական փոփոխութիւններ: Ձևաբանական են այն զուգահեռաբար գործածվող տերմինները, որոնք առաջանում են.

ա) Մեկ ձևական նշանակութիւն ունեցող ածանցի հավելումով՝ բառամիջում կամ բառավերջում, օրինակ՝

Յարատեութիւն||Յարատեղութիւն
 Կենդակ||Կենդանակ
 Ծօթնեակ||Ծօթներեակ
 Արտախուր||Արտախուրակ
 Պասեքատօն||Պասեքատօնակ
 Նախատօն||Նախատօնակ և այլն:

բ) Միևնույն արմատի վրա տարբեր վերջածանցների հավելումով, ինչպես՝

Լրութիւն||Լրումն||Լրականութիւն
 Հոլով||Հոլովութիւն||Հոլովումն
 Մոլորակ||Մոլորական
 Երկաւոր||Երկաւորեակ
 Աստղ||Աստղիկ (Արուսյակ մոլորակը)
 Յերեկ||Յերեկութիւն
 Փայլածու||Փայլածող

Հրատ||Հրաւոր
 Անց||Անցիկ||Անցարան||Անցանակ (զատիկ)
 Երեկոյ||Երեկուն||Երեկոբի||Երեկութիւն և այլն:

գ) Տարբեր արմատների վրա միևնույն վերջածանցի հավելմամբ, ինչպես՝

Լրութիւն||Բոլորութիւն
 Հոլովումն||Թաւալումն||Շրջումն||Յածումն
 Մագումն||Փայլումն (շարքը լրացնում է Մնունդ կրկնակը):

դ) Ընդհանուր արմատի վրա տարբեր նախածանցների հավելումով. այս տեսակետից չափազանց արդյունավետ են պար- և շրջ- նախածանցները, որոնցով ունենք բավական երկար շարք, այն է՝

Շրջառութիւն||Շրջաբերութիւն||Շրջաբերականութիւն||Շրջագայութիւն||Պարառութիւն||Պարաբերութիւն||Պարայածումն:

Այս տերմինները հին շրջանում կիրառվում էին նույն նշանակութեամբ, ինչ որ Հոլովում||Շրջան նույնանիշները:

և) Եզակի և հոգնակի ձևերով տարբերակներ, ինչպես՝
 Երկին||Երկինք
 Տիեզեր||Տիեզերք
 Սալ||Սալք
 Կաղանդ||Կաղանդք
 Բազմաստղ||Բազմաստղք
 Ախտար||Ախտարք (աստղերով մարդկանց ճակատագիրը գուշակող)
 Տօթաժամ||Տօթաժամանակք (ինչպես նկատում ենք, -Տ հոգնակերտն
 ավելացել է ոչ թե ժամ, այլ ժամանակ
 բաղադրիչի վրա, որից իմաստի փո-
 փոխություն չի առաջացել)

զ) Արմատի կրկնությունը առաջացած տարբերակներ, ինչպես՝
 Յեղումն||Յեղյեղումն. այս շարքի երրորդ անդամն է -Տ հոգնակերտով
 կաղավաթ կցականը՝ Յեղյեղակք:
 է) Բառավերջի -ի ձայնավորի անկմամբ առաջացած տարբերակներ,
 ինչպես՝

Ծկրաւորի||Ծկրաւոր
 Փառաղնոտի||Փառաղնոտ
 Միաշաբաթի||Միաշաբաթ
 Երկշաբաթի||Երկշաբաթ
 Զորեքշաբաթի||Զորեքշաբաթ և այլն:

3) Բառային տարբերակներ են միևնույն իմաստով գուգահեռաբար գոր-
 ծածվող այն տերմինները, որոնց հնչյունական կազմը ենթարկված է նշա-
 նակալի փոփոխության կամ միանգամայն տարբեր է: Ըստ այդմ կարելի է
 առանձնացնել երկու խումբ, որոնք կանվանենք՝

ա) Ընդհանուր ծագում ունեցող և
 բ) Ընդհանուր ծագում չունեցող տարբերակներ:

Ասենք, որ ծագում բառն այստեղ պայմանականորեն ենք կիրառում,
 նկատի ունենալով տերմինների հնչյունական կազմում ընդհանրության առ-
 կայությունը կամ բացակայությունը:

Ընդհանուր ծագում ունեցող տարբերակները կազմությամբ բարդ այն
 տերմիններն են, որոնց մի բաղադրիչն ամբողջությամբ փոխվում է, իսկ
 մյուս բաղադրիչը մնում է ընդհանուր, ընդ որում տարբերակների մի խմբում
 ընդհանուր է առաջին բաղադրիչը, երկրորդը՝ տարբեր, մյուս խմբում ընդհա-
 նուր է երկրորդ բաղադրիչը, իսկ առաջինը՝ տարբեր: Առաջին խմբի համար
 ունենք՝

Ժամադէտ||Ժամաբաշխ (աստղերով գուշակող)
 Օրաթիւ||Օրամուտք (օրերի դասակարգում)
 Ամսագլուխ||Ամսամուտ
 Տարեգլուխ||Տարեմուտ
 Հասարակածիւ||Հասարակակէտ (գիշերահավասար)
 Տօնացոյց||Տօնացուցակ (եկեղեցական օրացույց)
 Ականքթիթ||Ականթոթափել (ակնթարթ)

Կենդանակերպ||Կենդանատեսակ||Կենդանաբեր||Կենդանագիր և այլն: Այս
 խմբում կարող ենք ընդգրկել նաև Լուսաստղ||Լուսաբեր և Ալգաստղ||Ալգաբեր,
 կրկնակները, որոնք նույն հաջողությամբ կարող են ընդգրկվել նաև հաջորդ
 խմբում, միայն տեղերի որոշ փոփոխությամբ՝ Լուսաստղ||Ալգաստղ, Լուսա-
 բեր||Ալգաբեր (Ընդհանուր է երկրորդ բաղադրիչը): Ասենք, որ այսպիսի տե-
 ղափոխությամբ իմաստի որևէ խաթարում չի կատարվում, քանի որ, ի վեր-
 ջո, այդ չորս անվանումներն էլ միևնույն մոլորակի (Արուսյակ) անվանում-
 ներն են, իսկ մի այլ դասակարգման դեպքում այդ մոլորակի անվանումների
 շարքը կարելի էր ավելի մեծացնել: Ընդհանուր ծագում ունեցող տարբերակ-
 ների երկրորդ խմբի մեջ են մտնում նաև՝

Լուսնացոյց||Օրացոյց
 Հասարակօր||Կէսօր||Մէջօր

Տօնացոյց||կաղանդացոյց և այլն:

Կարծում ենք, որ Արուսյակի անվանումներից այստեղ տեղին կլինի հիշատակել ես մեկ զույգի մասին, այն է՝ Անկաստեղ||Ելասաեղ. որը պետք է նույնպես համարել ընդհանուր ծագում ունեցող: Այստեղ երկրորդ բաղադրիչն ընդհանուր է, իսկ առաջին բաղադրիչները հականշային հարաբերություններ են արտահայտում, որից, սակայն իմաստային որևէ փոփոխություն չի առաջանում, քանի որ այդ երկուսն էլ միևնույն «աստղի» անվանումներն են, որով տարբեր ժամերին՝ երեկոյան և լուսադեմին:

Հին շրջանի հայ աստղատոմարական տերմինահամակարգում զգալի թիվ են կազմում նաև տերմին-կապակցությունների տարբերակները, որոնք կարելի է դասակարգել նույն սկզբունքով, ինչ սկզբունքով դասակարգվում են ընդհանուր ծագում ունեցող տարբերակները: Մեզ հանդիպած աստղատոմարական տերմին-կապակցությունների տարբերակային շարքերում երկրորդ բաղադրիչն ընդհանուր է, իսկ առաջին բաղադրիչներն արտահայտում են հականշային հարաբերություններ, օրինակ՝

Մնունդ Լուսնի||Նորանալ Լուսնի

Հոանալ Լուսնի||Հնուլ Լուսնի

Կազումն Լուսնի||Զիջումն Լուսնի||Մաշումն Լուսնի

Անխաղաց տոմար||Անշարժ տոմար

Միր Յարդգողի||Հետք : Յարդգողի

Վարսաւոր աստղ||Տտնաւոր աստղ||Գիսաւոր աստղ||Նիզակաւոր աստղ և այլն:

Բնօրինակում ծագում չունեցող տարբերակները այն բարդ տերմիններն են, որոնց հնչյունական կազմում որևէ ընդհանրություն չկա, դրանք միանգամայն տարբեր են հնչում, սակայն արտահայտում են նույն հասկացություններ, անվանում են միևնույն լուսատուն: Այս խմբում ի մի բերված տերմիններն: Հասակարգման համար անհրաժեշտ է կատարել որոշ ստուգաբանական հետազոտություն, քանի որ այստեղ համեմատաբար շատ են փոխառությունները, և այս խմբի տարբերակային շարքերը գերազանցապես գոյացել են բնիկ ու փոխառյալ տերմինների միաժամանակյա գործածությունից: Այստեղ թերևս կարևոր է պարզել, թե դրանցից որն է բնիկ, որը փոխառյալ, որն է ավելի վաղ սկսել գործածվել, երբ է արդեն գործող տերմինի նույնանիշը մուտք գործել համակարգ և մի շարք այլ հարցեր: Մանրամասների մեջ չմտնելով՝ կատարենք միայն որոշ չափով ընդհանուր դասակարգում, այսինքն՝ առանձնացնենք այնպիսի խմբեր, որոնցում կրնդգրկվեն՝

ա) տարբերակային հարաբերությունների մեջ գտնվող բնիկ և փոխառյալ տերմիններ, ինչպես՝

Լուծ||Կշիռ||Օրիոն

Հրատ||Արէս||Մարս

Ծրակա||Կռոնոս||Սատուռնոս||Ջոհալ||Ապրայոյդ

Օրացոյց||Տոմար

Հոգեզալուստ||Պենտեկոստէ

Թոհի||Աստեղածիգթ||Ասուպ

Կենդակ||Զոդիակոս

Ծօթնեակ||Շաբաթ

Լուսնիթագ||Փայիթոն

Աստղիկ||Արուսեակ||Ափրոդիտէ||Վեներա:

բ) Բուն հայկական և հայակերտ տերմիններ, որոնք իրարից անկախաբար կիրառվել են տարբեր հեղինակների կողմից, ինչպես՝

Բոլորեակ||Տիեզեր

Մոլորակ||Հնթացողք

Անմոլորակ||Չմոլորեցուցիչք

Տիւ||Յերեկ

Օրագիշեր||Գիշերատիւ||Շափառուկ (վերջինս անստույգ է)

Գիշերավար||Երեկ (Արուսյակ մոլորակը՝ երեկոյան)

Եզն||Յուլ||Զուարակ (վերջինս անստույգ է):

Հնդհանուր ծագում չունեցող տարբերակների այս երկու հիմնական խմբերից բացի կարելի է առանձնացնել ես մի փոքրիկ խումբ, որտեղ կընդգրկվեն գերազանցապես այն տերմինները, որոնց ծագումը կամ ստույգ հայտնի չէ, կամ միասնական ստուգաբանություն չունեն։ Դրանցից են, օրինակ՝ Կէտ||Բեեռ, Միւր||Պարոյր և այլն։

Հին հայերենի աստղատոմարական տերմինահամակարգի դիտարկումից ակնհայտ է դառնում, որ ի տարբերություն գուգաձևությունների՝ հիմնականում երկանդամ, հազվադեպ եռանդամ լինելու մասին եղած տևականությունը, այստեղ բավական շատ են ոչ միայն երկանդամ ու եռանդամ, այլև բառանդամ շարքերը, հանդիպում են նույնիսկ հինգանդամ, առավել հազվադեպ՝ վեցանդամ և յոթանդամ շարքեր, ինչպես՝

Հիւլէ||Շամանդաղ||Բալ||Մէգ||Մլար||Մթարութիւն,

Լրումն||Լրութիւն||Լրականութիւն||Լուսալրութիւն՝

Լուսնալիր||Լնուլ Լուսնի||Լրանալ Լուսնի և այլն։ Նկատենք, որ Արուսյակ մոլորակին տրվող անունների թիվն է՛լ ավելի մեծ է, այն է՝ Լուսաբեր||Լուսաստղ||Այգաբեր||Այգաստղ||Աստղիկ||Լուսոյ աստղ||Աստղ առաւօտեան (...առաւօտու, ...առաւօտին)||Գիշերավար||Երեկ||Ափրդդիտէ||Արուսեակ (Արուսեակ) ||Վեներա։

Հին շրջանի աստղատոմարական տերմինահամակարգում տեղ գտած տարբերակների բազմանդամությունը բացատրվում է նրանով, որ այդ շրջանին առավել, քան մյուս շրջաններին, բնորոշ է առօրյա գործածություն ունեցող բառերի տերմինացումը, որի դեռևս ոչ պատշաճ ամրակալվածությունը էլ պատճառաբանվում է տերմինների և ընդհանուր բառապաշարի բառերի միջև հստակ սահմանազատման բացակայությունը։

ВАРИАНТЫ В СИСТЕМЕ АСТРОНОМИЧЕСКИХ И КАЛЕНДАРНЫХ ТЕРМИНОВ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА.

В. С. АВЕТИСЯН

Р е з ю м е

Вариативность терминов характерна главным образом для периода формирования терминологической системы, когда терминообразование еще происходит стихийно. Как показывает материал астрономических и календарных терминов древнего периода армянского языка, терминологические варианты можно подразделить на 3 основные группы: 1) фонетические, 2) морфологические, 3) лексические. В первую группу входят варианты, выражающие тождественные значения при минимальном фонетическом различии; по этому признаку выделяются подгруппы собственно фонетических, орфографических и др. вариантов. Морфологические варианты, выражая тождественные значения, образуются морфологическими различиями в плане выражения: добавление аффикса (префикса или суффикса) к одному корню, повторение корня и др. Лексические варианты по своему фонетическому составу либо претерпели значительные изменения, либо совершенно различны.

՝ К. С. Горбачевич, Вариантность слова и языковая норма, Л., 1978, с. 19.

A DIFFERENTIATION BETWEEN ANCIENT ARMENIAN ASTRONOMIC AND CALENDAR SYSTEMS OF TERMINOLOGY

AVETISIAN V. S.

S u m m a r y

The differentiation of terms is perfectly characteristic of the period of formation of terminological systems when term formations were still performed spontaneously. A scrutiny of the ancient Armenian astronomic and calendar terms offers a possibility to classify the terminological variations into 3 fundamental groups: 1) phonetic 2) morphological 3) verbal. The first group contains terms which express the same meaning, but have slight differences in their phonetic compositions. And accordingly a number of subgroups can be identified as original phonetic, orthographic and so on. Morphological variations express the same meaning, but there, within the expression, exist various morphological differences, additions of prefixes and/or suffixes onto the same stems, repetitions of stems, and so on. The phonetic composition of verbal variations is differentiated either significantly or they are altogether different words.